

ԱԶՏԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE **أزதாக** جريدة يومية سياسية وأدبية - الليرة السورية - إيشاد دوت كوم

1500 L.Ո. 75ԳԳ-ՏԱՐԻ, ԹԻԻ 172 (21222) ՀՈՐԵՔԸԱԲԹԻ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2002 10 ԷՁ

Ե. ՄԻՈՒԹԵՆԷՆ ԿՈՉ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ

Երոսկան Միութիւնը երէկ Վրաստանի եւ Ռուսիոյ կոչ ուղղեց՝ պուս Ըլլալու Փանքիսի կիրճին հարցով: Մոսկուա կը պնդէ, որ Փանքիսի կիրճը կը գործածուի իբրեւ խարխիս չեչէն ըմբստ փինեայներու կողմէ: Վրաստան կ'ըսէ, որ Փանքիսի կիրճը «մաքած» է չեչէններէն: Դանիոյ երոսկան հարցերու նախարար Պերթէյ Հասարոբը ըսաւ, որ Վրաստանի եւ Ռուսիոյ կոչ կ'ուղղէր՝ ճիշդը համակարգելու, իրենց սահմաններուն վրայ ապահովութիւնը հաստատելու համար: Դանիա ներկայիս կը նախագահէ Երոսկան Միութեան:

(ՌՈՅԹԸՐԶ)

ՎԵՐԱՍՈՒՏ

Խանդավառ եւ վառօրէն հայաբոյր մթնոլորտի մէջ, Լիբանանի Ազգային վարժարանները, ինչպէս նաեւ բոլոր հայկական վարժարանները վերաբացին իրենց դռները հայ աշակերտ - աշակերտուհիներուն առջեւ՝ լաւագոյն ապագայի հեռանկարով:

Հակառակ երկրին տնտեսական ծանր տագնապին հայ ծնողները, ազգային բարձր գիտակցութեամբ, իրենց զաւակները առաջնորդեցին հայ դպրոց՝ քաջ հաւատալով, որ միայն հայ դպրոցը կը մնայ հայ մանուկին հարազատագոյն միջավայրը:

Ստորեւ կու տանք Լիբանանի Հայոց Թեմի առաջնորդ Գեղամ եպս. Սաչքեանի վերամուտի խօսքը՝ ուղղուած հայ աշակերտութեան:

«Աստուծոյ կամքով եւ հաճութեամբ սիւսակա տարի մը եւս հայկական վարժարաններուն դռները յայն բացուած՝ պատրաստ են ձեզ ընդունելու:

Բարի եկաք ձեր հարապատ տունը, որ հայկական վարժարանն է: Թէեւ իբրեւ հարապատ պալատ այս տան, աւելորդ պիտի ըլլար բարի գալուստ մաղթել ձեզի, սակայն հայ մանուկը հայկական վարժարանին մէջ անգամ մը եւս տեսնելը մեզի կու տայ անհուն ուրախութիւնը, որովհետեւ այդ է ճիշդը եւ այդ է բնականը հայուն համար:

Այսօր ձեզ կ'ողջունենք անսահման ուրախութեամբ, քայքայ միաժամանակ մեր հոգիին մէջ կը զգանք տիրութիւնը, որ այսօր շատ մը հայ մանուկներ հայկական վարժարանին մէջ չեն, եւ մենք պրկուած ենք պիրենք եւս ողջունելու, իրենց բարի գալուստ մաղթելու ուրախութենէն, իսկ մեզմէ աւելի իրենք պրկուած են, հայկական վարժարանին հարապատութիւնը եւ գործուրանքը վայելելու իրաւունքէն:

Հայ դպրոցը տունն է հայ աշակերտին: Ինչպէս որ մարդ մը հարապատ միջավայր,

սեփական աշխարհ չ'ունենար, երբ տուն չունի, այդպէս ալ հայ աշակերտը իր հարապատ, սեփական միջավայրը չ'ունենար, երբ հայկական վարժարանէն դուրս կը գտնուի:

Մեր շուրջը կան շատ գեղեցիկ եւ շլացուցիչ շրջափակով եւ միջավայրով ոչ հայկական վարժարաններ, բայց անոնք կը պատկանին ուրիշին, մինչդեռ հայ դպրոցը կը պատկանի մեզի՝ հայերու: Այնպէս չէ՞, որ աշխարհի բոլոր լիճերուն մէջ Սեւանայ լիճը մերն է՞ ուր երկինքը իր պատճէնը կը հասնէ, եւ երկնի անթիւ աստղերէն Արագածի կատարին կախուած Լուսաւորչի կանթեղը մերն է, ինչպէս որ մեր անմահաւուն բանաստեղծները՝ Պարոյր Սեւակ եւ Վահան Թեքեան ըսած են:

Հետեւաբար, սիրելի աշակերտ աշակերտուհիներ, հարապատի նման մտք հայկական վարժարանէն ներս եւ կեանք տուէք անոր, այնպէս ինչպէս կրակը՝ վատարանին, շունչը՝ մարմնին եւ ջուրը՝ ծաղիկին: Այլապէս ի՞նչ արժէք ունի հայկական վարժարանը առանց ձեզի՞ հայ աշակերտին:

Հարապատութեան այս զգացումներով կը դիմաւորենք ձեզ եւ բարի ու յաջող տարի մը կը մաղթենք ձեզի:

Աստուած օրինէ ձեզ եւ Աստուծոյ շնորհքը եւ հովանին ձեր վրայ ըլլայ այժմ եւ յաւիտեանս»:

ԱՊՈՒ ՄԱՁԷՆ՝ ՍՈՍԿՈՒԲՅԻ ՄԷՁ

ԵԱՍԵՐ ԱՐԱՖԱԹԻ ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԱՐՁԱԿԱԶԷՆՆԵՐՈՒ ԸՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ



Պաղեստինցի կիներ կը սպասեն արտօճութեան, Արաֆաթի կեդրոնատեղին մտնելու համար

Այն պահուն, երբ Իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոն կ'աւարտէր Ռուսիա երկօրեայ այցելութիւնը, Մոսկուա կը ժամանէր պաղեստինցի ղեկավար Մահմուտ Ապ-

պաս (Ապու Մազէն), որ այսօր տեսակցութիւն պիտի ունենայ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի հետ, քննարկելու համար Շարոնի այցելութեան արդիւնքները,

ինչպէս նաեւ ներկայացրնելու պաղեստինեան պայմանները տագնապին լուծման համար: Ապու Մազէն, որ կը Ծար.՝ էջ 10


ԻՐԱՔԻ ՀԱՐՅ

ՊԼԷՐ Կ'ՈՒԶԷ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԱՍՏԱՏԵԼ ՊԱՏԵՐԱԶՄՈՎ

Մինչ ՄԱԿի մասնագետներ Վիեննայի մէջ երկրորդ օրն ըլլալով բանակցութիւններ կը կատարէին իրաքի պաշտօնատարներուն հետ, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլէր կոչ կ'ուղղէր աշխարհին՝ շարժելու Իրաքի ներկայացուցչութեան յետ, այլապէս՝ ՄԱԿի իշխանութիւնը պիտի տապալի:

Պլէր, որ ամբողջական գորակցութիւն յայտնած է Միացեալ Նահանգներու նախագահ Գործ Պուշի որդեգրած անգործ կեցուածքին, դիտել

տուա, որ Իրաքի նախագահ Սատամ Հիւսէյն պէտք է եճարկուի ՄԱԿի որոշումներուն, որոնք կը պահանջեն ապագին երկիրը: Պլէր, որ կը խօսէր Աշխատաւորական Կուսակցութեան Կարգադրութեան խորհրդաժողովին, ըսաւ, որ եթէ այս հանգրուանին աշխարհը հաւաքակալ կամքը չունենայ հակադարձելու



Պլէր. «Պատերազմով խաղաղութիւն պիտի հաստատենք»

Իրաքէն եկող վտանգին, ոչ միայն Ամերիկայի եւ Բրիտանիոյ իշխանութիւնը խնդրոյ առարկայ պիտի դառնայ ու տապալի, այլեւ՝ ՄԱԿի իշխանութիւնը: «Երբեմն եւ յատկապէս երբ հարցը կ'առնչուի բռնատիրոջ մը, խաղաղութեան միակ առիթը պատերազմի պատրաստութիւնն է», աւելցուց Պլէր, որ իստ քննադատութեան կ'ենթարկուի Աշխատաւորական Կուսակցութեան շարքերէն անգամ:

Պատերազմի որոշակի պարզած Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա կը շարունակեն իրենց ճիգերը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէջ որդեգրելու համար բանաձեւ մը, որ կը սպառնայ զինուորական գործողութիւն մը Իրաքի դէմ, եթէ անիկ

ԵՐԵՒԱՆ ԿԸ ՀԵՐՔԷ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ԱԼԻԵՒԻ ՊՆԴՈՒՄՆԵՐԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան հերքեց Արաբիանի նախագահ Հայտար Ալիւեի այն պնդումները, թէ Սադարակի մէջ անցեալ Օգոստոսին կայացած իրենց վերջին հանդիպումին քննարկած են հայկական ուժերու հակակշիռին տակ գտնուող կարգ մը շրջաններու յանձնումին դիմաց Պաքու - Երեւան երկաթուղիի բանեցման ապրպէյմանական առաջարկ մը:

Հայաստանի նախագահի բանբեր Վահէ Գաբրիէլեան լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին, անդրադառնալով ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներուն հետ Ալիւեի վերջին հանդիպումին ընթացքին Արաբիանի նախագահին յայտարարութիւններուն, ըսաւ. «Պաքու - Երեւան - Նախիջեւան երկաթուղիի բանեցման փոխարէն գրաւուած շրջաններու յանձնումը նոր առաջարկ մը չէ, եւ Սադարակի հանդիպումին Ալիւե հարեանցի կերպով անդրադարձած է առաջարկին. իսկ անիկա չէ քննարկուած նախագահներուն կողմէ»:

Վ. Գաբրիէլեանի համաձայն, ապրպէյմանական կողմը նախապէս ներկայացուցած է նման առաջարկ մը, ներառեալ՝ նախագահներու անձնական ներկայացուցիչներուն հանդիպումներուն, սակայն առաջարկը մերժուած է: «Հայաստանի դիրքորոշումը այս հարցին վերաբերեալ այն է, թէ Հայաստան անհրաժեշտ կը գտնէ Լեռնային Ղարաբաղի տագնապին լուծումը համապարփակ, փաթեթային տարբերակով, եւ ոչ մէկ բաղկացուցիչ մաս կարելի է

Ծար.՝ էջ 2

ՍԱՐԳՍԵԱՆ - ԻՎԱՆՈՎ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկուայի մէջ երէկ բանակցութիւններ ունեցան Հայաստանի եւ Ռուսիոյ պաշտպանութեան նախարարներ Սերժ Սարգսեան եւ Սերգէյ Իվանով: Բանակցութիւններուն աւարտին ստորագրուեցան երեք փաստաթուղթեր՝ ռազմական ենթակառոցներու սարքերու միացեալ օգտագործման շուրջ միջպետական համաձայնագիր, տեղեկատուական բնագաւառէն ներս փոխանակումներու մասին միջպետական համաձայնագիր, եւ արձանագրութիւն մը Հայաստանի ռազմական գերատեսչութեան ղեկավարի Ռուսիա կատարած այցելութեան արդիւնքներուն վերաբերեալ:

Բանակցութիւններէն ետք կայացած մամուլային ասուլիսին ընթացքին Ռուսիոյ պաշտպանութեան նախարարը յայտարարեց. «Ռազմական բնագաւառէն ներս Հայաստանի հետ մեր յարաբերութիւնները կայուն եւ շատ լուրջ ընդթ կը կրեն»: «Հայաստանի մէջ Հաստատուած է զօրքերու եւ ուժերու միացեալ խմբաւորումը, որ կը գործէ համաձայն երկուստեք ընդունուած ծրագրերուն: Անիկա ապահովուած է անհրաժեշտ ամէն ինչով, եւ կայունացընող գեր կը խաղայ կովկասի ռազմաքաղաքական իրավիճակին մէջ», շեշտեց Սերգէյ Իվանով: Ռուս նախարարը նաեւ յայտնեց, որ Ռուսիոյ ռազմական ուսումնարաններուն մէջ կ'ուսանին աւելի քան 200 հայ

Ծար.՝ էջ 9

ԶԵԶԷՆ ԶԻՆԵԱԼՆԵՐ՝ ԶԱԽԱԽՔԻ ՄԷ՞Ձ

«Ա-ԻՆՏՅՕ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Փանքիսի կիրճին մէջ հաստատուած չեչէն փինեայները ոչնչացնելու վերաբերեալ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի յայտարարութիւնէն ետք, չեչէն փինեայները սկսած են տեղափոխուիլ աւելի ապահով շրջաններ: «Ա-ԻՆՏՅՕ» վկայակոչելով հաւաստի աղբիւրներ, հաղորդեց, որ չեչէնները իբրեւ այդպիսի վայր նախընտրած են Վրաստանի Ջուարի նահանգը: Չեչէն փինեայներ կան Բակուրեանի, Ապասթումանի, Ախալցխայի, Վարձիայի ձորին մէջ: Ախալցխա ժամանած է նաեւ չեչէն դաշտային հրամանատար Կիլայե: Կ'ըսուի, թէ այդ շրջանին մէջ պիտի վճռուի չեչէն փինեայներուն թուրքիա անցնելու հնարաւորութիւնները:

«Ա-ԻՆՏՅՕ»ի համաձայն, չեչէն փինեայներ նաեւ ապաստան կրնան գտած ըլլալ Ախալքալաքի եւ Ծալկայի շրջանները իրարմէ բաժնող Սամսարի լեռներուն մէջ:

Ծար.՝ էջ 3

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ՝ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՏՈԼԱՐՈՎ ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

10,25%* տարեկան տոկոսով

- *Նուազագոյն մասնակցութիւն՝ 3000\$
- *3 տարուան մասնակցութեան տեսողութեամբ
- *Տոկոսը կը վճարուի իւրաքանչիւր 6 ամիսը անգամ մը:

Հեռ.- 01/745660
01/248997

بنك التمويل ش.م.ل
Finance Bank s.a.l.

Տարածուող Պէճ - Գլխաւոր կեդրոն՝ Ըամրա, Ապու էլ Ազիզ փողոց, «Իժորա» շէճ, Ա. յարկ: Տարածուող Պէճ - Գլխաւոր կեդրոն՝ Ըամրա, Ապու էլ Ազիզ փողոց, «Շըմայէլ» շէճ, Ա. յարկ:

Տարածուող Պէճ - Գլխաւոր կեդրոն՝ Ըամրա, Ապու էլ Ազիզ փողոց, «Իժորա» շէճ, Ա. յարկ: Տարածուող Պէճ - Գլխաւոր կեդրոն՝ Ըամրա, Ապու էլ Ազիզ փողոց, «Շըմայէլ» շէճ, Ա. յարկ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԻՔՖԱՅԱՅԻ ՎԱՆՔԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԱՄՈՒՆՆԱԿԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ

Այսու կը յայտնենք մեր բարեպաշտ ժողովուրդին, որ յառաջիկայ Կիրակի, 6 Հոկտեմբեր 2002-ին սկսեալ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութիւնը Պիքֆայայի ամառանոցէն պիտի վերադառնայ Անթիլիասի մայրավանք: Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքին մէջ մատուցուող Կիրակի օրերու պատարագները պիտի դադարին մինչեւ յառաջիկայ ամառ: Ուստի, կը հրաւիրենք շրջանի մեր ժողովուրդը ամէն Կիրակի ներկայ գտնուիլ Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ մատուցուող Ս. պատարագներուն, հոգեպէս լեցուելու համար մեր եկեղեցւոյ հոգեթով շարականներով ու աւետարանական պատգամներով:

Պիքֆայայի Ս. Աստուածածին վանքին մէջ գտնուող Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան դպրեւանքը յառաջիկայ քանի մը օրերուն պիտի վերաբանայ իր դռները 2002 - 2003 կրթական տարեշրջանին համար եւ այնուհետեւ ամէն առաւօտ եւ երեկոյ Պիքֆայայի մէջ տեղի պիտի ունենան առաւօտեան եւ երեկոյեան ժամերգութիւններ՝ դպրեւանքի սաներուն յատուկ: Իսկ ամէն Ուրբաթ օր, անցնող քանի մը տարիներու սովորութեան համաձայն, երեկոյեան ժամը 5:00ին Ս. պատարագ պիտի մատուցուի Պիքֆայայի վանքին մէջ, դպրեւանքի սաներուն մասնակցութեամբ, անոնց հոգեւոր պատրաստութեան համար:

ՅՈՎՆԱՆԵԱՆ Կ'ԸՆԴՈՒՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՍԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ ընդունեց Լիբանանի Սկաուտական Համադաշնակցութեան մէկ պատուիրակութիւնը, գլխաւորութեամբ Ռուբըյ Քասիպի:

Հանդիպումին քննարկուեցաւ Լիբանան - Սուրիա սկաուտական միացեալ ծրագրականները:

Պատուիրակութիւնը շնորհակալութիւն յայտնեց նախարար Յովնանեանի բանակումին յաջողութեան ի խնդիր անոր ճիգերուն համար:



BYBLOS INSTITUTE TECHNICAL INSTITUTE

**TECHNICAL BACCALAUREAT - BT
SUPERIOR TECHNICAL - TS**

- Computer & Accountancy
- Sales & Commercial Relationships
- Electronics
- Car Mechanics
- Preschool Education
- Expert Accountant
- Computer Science
- Business Administration & Marketing

**SPECIALIZATION
TECHNOLOGY - TDS**

- General Accountancy
- Chief accountant
- Executive secretary
- Esthetics & Make-up
- Computer Technology
- Electronics (T.V. & Cellular)
- Mechanics & Car Electronics
- Car Diagnostics Technology
- Electricity - Refrigeration

Haret Horeik 01 273863 Dora 01 894600 Furn-El-Cheback 01 293175

ՉԻՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԸ ԼԻԲԱՆԱՆ Կ'ԱՅՅԵԼԷ

Չինաստանի կառավարութեան յատուկ պատուիրակ Եանկ Կեյեարտօ երէկ այցելեց վարչապետ Ռաֆիք Հարիրիի, խորհրդարանի փոխ նախագահ Էլի Յըրպիլի եւ արտաքին գործոց եւ արտերկրի իրաւանցիներու հարցերու նախարար Մահմուտ Համմուտի: Կեյեարտօյի ընկերացաւ Լիբանանի մէջ Չինաստանի դեսպան Լիոկոպ Եանկիուս:

Հանդիպումներուն քննարկուեցաւ Չինաստանի կողմէ 2010ին Շանհայի մէջ համաշխարհային տօնավաճառը հիւրընկալելու նպատակով Չինաստանի կատարելիք օժանդակութիւնները, ինչպէս նաեւ Լիբանան - Չինաստան երկկողմանի յարաբերութիւնները:

ՊԼԷՐ Կ'ՈՒԶԷ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ... Շարունակութեամբ Ա. ԷՅԸՆ

Հ'ենթարկուի ապապինման ու վէսքի քննիչներուն հետ գործակցելու պահանջներուն:

Սպիտակ Տնօնք երէկ մերժեց միջին համաձայնութեան ծրագրի մը գծով Քոնկրէսի մէջ առաջարկուած բանաձեւը, որ կը սեղմէ Իրաքի դէմ ամերիկեան յարձակումի մը պայմանները: Սպիտակ Տան բանքեր Արի Ֆլայշըրը ըսաւ, որ առաջարկուած բանաձեւը պիտի սահմանափակէ Սատուած Հիւսէյնի դէմ ուժի գործածութեան կարելիութիւնը: Առաջարկը, որ ներկայացուած է հանրապետական եւ դեմոկրատ երկու ժողովուրդականներու կողմէ, ընդունելի չէ Սպիտակ Տան համար, որ պատերազմ յայտարարելու իրաւաստութիւն կը պահանջէ՝ առանց կաշկանդող պայմաններու:

Միւս կողմէ, Բրիտանիոյ արտաքին գործոց նախարար ձեռք Սթրօ երէկ պնդեց, որ թէ՛ Լոնտոն, թէ՛ Ռաշինկթըն կ'ուզեն խաղաղ լուծում մը գտնել, Իրաքի վէսքերու պահեստին պատճառով վէճին: Սթրօ շեշտեց, որ երկու երկիրներն ալ կ'ուզեն խաղաղ լուծումը. որ սակայն կը պահանջէ Սատուած Հիւսէյնի դէմ խստագոյն կեցուածքը:

Պլէրի կառավարութեան մէկ այլ նախարարը՝ Քլէր Շորթ

անուղղակի կերպով քննադատեց վարչապետը, երբ յայտարարեց, թէ Իրաքի մէջ վարչակարգի փոփոխութիւնը կը բնութարարէ միջազգային օրէնքը: Շորթ դիտել տուաւ, որ Բրիտանիա չի կրնար զօրավիգ կանգնիլ պատերազմի մը, որուն թիրախը իշխանութիւնը փոփոխութեան ենթարկելն է:

ԻՐԱԷ ԿԸ ԶՈՒՏԱՆԵ ԹՈՒՐԵԱՆ

Իրաք ՕԹԱՆի անդամ սահմանակից Թուրքիան վզուշացուց, դիտել տալով, որ Անգարա ինքզինք վտանգի պիտի ենթարկէ եւ պիտի կորսնցնէ Պաղատաի հետ իր բարեկամութիւնը, եթէ զօրավիգ կանգնի ամերիկեան յարձակումներուն:

Թուրքիա հրապարակաւ կը յայտարարէ, թէ դէմ է պատերազմին, բայցեւայնպէս կը թեքի դէպի Ռաշինկթընի կեցուածքին: Անգարա Իրաքին կը պահանջէ ենթարկուիլ ապապինման որոշումներուն:

Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ալիլ, որ Թուրքիա կ'այցելէ ապառքուելու համար սահմանակից երկրին վարակցութիւնը, երէկ շարունակեց տեսակցութիւնները թուրք ղեկավարներուն հետ:

Միւս կողմէ, Իրաքի կառավարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւնը մը վերստին շեշտեց, որ ամերիկեան ու բրիտանական սպանալիքները չեն վախճներ Իրաքը, որ պիտի չընդունի Ռաշինկթընի կողմէ բանաձեւուած որոշումն ի նախագիծ մը, որ կրնայ որդեգրուիլ Ապառքուութեան Խորհուրդին կողմէ:

ԻՐԱՆԻ ԿԱՇՏՈՒՄ
ՆՈՐԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԱՐԻ ՇԱՄԻԱՆԻ ԸՍԱՒ, որ Թեհրան մաս պիտի չկայ մեր դէմ պիտի տրական գործողութեան մը, նոյնիսկ եթէ անկախ ապահոված ըլլալ ՄԱԿի հաւանութիւնը:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻԿ

Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը կը յայտարարէ, որ Լշան Փալանճեան ձեռնարանի ուսանողական գիշերօթիկի բաժնին մէջ մնացած են սահմանափակ թիւով սենեակներ, որոնք տրամադրելի են ուսանողներու: Փալանճեանը կը խնդրենք կապ հաստատել հետեւեալ թիւերուն եւ կամ անձամբ ներկայանալ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան գրասենեակ, Լշան Փալանճեան ձեռնարան:

Հեռաձայնի թիւեր՝ 01 - 372455, 01 - 375409
Ել 03 - 549917
E - mail Hamazcen@cyberia.net.lb

السفير

السفير

السفير

السفير

السفير

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

1 Հոկտեմբերի տեղական մամուլը լուսարձակի տակ առած է մարոնի եպիսկոպոս Սաուայի արձանագրած մեծ յաջողութեան արժանանալը, Սուրիոյ նախագահ Պաշշար Ասատի եւ Եգիպտոսի նախագահ Հիւսէյն Մուպարաբի տեսակցութիւնը եւ Իրաքի հարցին առնչուող իրադարձութիւնները:

«Անուար» գրած է, թէ Քըրնէթ Շահուանը եւ խորհրդակցական հանդիպումը կը դիմեն Պերթէ՛ մարոնի եպիսկոպոսներու ժողովի նախօրեակին: Ըստ թերթին, ՍՖէյր պատրիարք, ընդդիմութիւնը եւ իշխանութիւնը համակարծիք են Սուրիան դատապարտող օրէնքին դէմ ըլլալու տեսակէտին:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, կը սպասուի, որ մարոնի եպիսկոպոսներու ժողովին բիւի իշխանութեան դէմ կարծի կեցուածք մը Քըրնէթ Շահուանի հանդիպումը իր ընթացիկ ժողովը յետաձգեց, իսկ ՍՖէյր պատրիարք չնչեց իր ժամադրութիւնները, եպիսկոպոսներու ժողովին պատրաստուելու համար:

«Լիուա»-ի հակնաձայն, վարչապետ Ռաֆիք Հարիրի կը խօսի դրական տեսակէտերու մասին, իսկ մարոնի եպիսկոպոսներու ժողովին հաւասարակշռուած հաղորդագրութիւնը մը կը սպասուի:

«Տիար» նշած է, թէ ՍՖէյր պատրիարք կը քննադատէ թէ՛ իշխանութեան եւ թէ՛ ընդդիմութեան սխալները: Ըստ «Նահար»-ի, քաղաքական շրջանակներու մէջ կրկին կը խօսուի երկխօսութիւնը վերսկսելու մասին. ընդհանուր դատախապ Ատան Ատունը կը յայտնէ, որ «Փուս» ուղղաթիւներու հարցով յանցանքներու եւ յանցարարներու գոյութիւնը կրնայ ճշդուել միայն թղթածրարին քննութեանէ ետք:


Թերթերը լայն տեղ

«Տիար» նշած է, թէ ՍՖէյր պատրիարք կը քննադատէ թէ՛ իշխանութեան եւ թէ՛ ընդդիմութեան սխալները: Ըստ «Նահար»-ի, քաղաքական շրջանակներու մէջ կրկին կը խօսուի երկխօսութիւնը վերսկսելու մասին. ընդհանուր դատախապ Ատան Ատունը կը յայտնէ, որ «Փուս» ուղղաթիւներու հարցով յանցանքներու եւ յանցարարներու գոյութիւնը կրնայ ճշդուել միայն թղթածրարին քննութեանէ ետք:

Թերթերը լայն տեղ

«Տիար» նշած է, թէ ՍՖէյր պատրիարք կը քննադատէ թէ՛ իշխանութեան եւ թէ՛ ընդդիմութեան սխալները: Ըստ «Նահար»-ի, քաղաքական շրջանակներու մէջ կրկին կը խօսուի երկխօսութիւնը վերսկսելու մասին. ընդհանուր դատախապ Ատան Ատունը կը յայտնէ, որ «Փուս» ուղղաթիւներու հարցով յանցանքներու եւ յանցարարներու գոյութիւնը կրնայ ճշդուել միայն թղթածրարին քննութեանէ ետք:

Թերթերը լայն տեղ




• Կը ստանձնէ ուրախ առիթներու video
Գկարահանումներ

Հեռ. 01-266866
Ել 03-695399

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐ ՎԵՐԱՍՈՒՄ

Համազգայինի «Պայան» պարարուեստի դպրոցի 2002 - 2003 տարեշրջանի վերամուտը պիտի սկսի հետեւեալ ժամանակացոյցով. -
Ա. - 4րդ դասարան, Ուրբաթ, 4 Հոկտեմբեր 2002, երեկոյեան ժամը 6:00ին:
Բ. - Նորեկ աշակերտութեան համար (6 տարեկան եւ վեր) Շաբաթ, 5 Հոկտեմբեր 2002, կեսօրէ առաջ ժամը 11:00ին:
Գ. - Մնացեալ բոլոր դասարանները, Շաբաթ 5 Հոկտեմբեր, կեսօրու ժամը 12:00ին:
Պարուսոյց՝ ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
ԵՆԱՕԹ. - «Սոնօ» սրահին մէջ 2002 թուականի «Ընար» պարախումբին եւ «Պայան» դպրոցի պարախումբին ելոյթներու վիտօ - երիզները եւ լուսանկարները կարելի է ստանալ միաւորի վարչութեան:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐ ԿԱՐՉՈՒԹԻՒՆ



ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Միջազգային Քաղաքական Կեանք

ԱՆՊԱՐԿԵՇՏՈՒԹԻՒՆԸ ԱՅՌ ԱՅՍՊԵՍ ԿՈՉՈՒԱԾ ԹՂԹԱԾՐԱՐԻՆ

ԵԹԵ ԱՅՍ ԹՂԹԱԾՐԱՐԸ ՀԻՍՆՈՒԱԾ Է «ՀԱՒԱՆԱԲԱՐ»ՆԵՐՈՒ ԵՒ «ԵԹԵ»ՆԵՐՈՒ ԿՐԱՅ, ԱՊԱ ՄԵՆԵ ԳԵՆԵ ՈՒՉԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԹԱԼ

Իրաքի մասին թոնի Պլեյրի «Թղթածրարը» ցնցիչ փաստաթուղթ մըն է: Պարկեշտ մարզ մը գայն կարգալով միայն ամօթ եւ գարտոյ կը զգայ: Անոր էջերուն մէջ ներկայացուած են վերջին ապացոյցները (եթէ պարունակութիւնը ճիշդ է), թէ մարդկութեան դէմ մեծ ոճիր գործուած է Իրաքի մէջ: Իսկ եթէ Սատտամի կողմէ հաւաքական ոչնչացման գէնքեր չի նետու մանրամասնութիւնները ճիշդ են (եւ հետագային կը խօսինք «եթէ»ներուն եւ «կրնայ ըլլալ»ներուն մասին), ապա այդ մէկը կը նշանակէ, որ ՄԱԿի կողմէ գործադրուած ծանր, արգիւտը եւ խիստ պատժամիջոցներու քաղաքականութիւնը ամբողջութեամբ ձախողած է: Այլ խօսքով, մենք կէս միլիոն իրաքցի երեխաներ սպաննեցինք ոչինչի համար:

Յետագարձ ակնարկով մը յիշենք 12 Մայիս 1996ը: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մատրլէյն Օլայրայթ նախապէս տեղեկացուցած էր, որ պատժամիջոցները դրական արդիւնք կ'ունենային եւ կ'արգիւտէին Սատտամի կողմէ հաւաքական ոչնչացումի գէնքերը շինութիւնը: Պահպանողական մեր կառավարութիւնը համաձայն գտնուեցաւ, եւ թոնի Պլեյրի հաւատարմարար հաստատեց տեղեկութիւնը: Մակայն 12 Մայիս 1996ին Օլայրայթ ելոյթ ունեցաւ ՄԱԿի ՊԻ. ԷՍ. պատկերասփիւռի կայանէջի եւ հարգազրոյցին ընթացքին սպաննուած կէս միլիոն երեխաներուն մասին հարցումի մը պատասխանելով աշխարհին զարմանք պատճառելով ըսաւ, որ «կը կարծենք, թէ վճարուած այդ գինը արժեք է»:

Այսօր մենք գիտենք, որ (եթէ անշուշտ Պլեյրի իրականութիւնը կ'ըզէ, մեզի) այդ գինը չէր արժէր: Պլեյրի թղթածրարը մեզի կը տեղեկացնէ, թէ հակառակ պատժամիջոցներուն, Սատտամ կըրցած է շարունակել հաւաքական ոչնչացման գէնքերը շինութիւնը: Ուրեմն, ամբողջ այդ արհեստագիտութեան մասին խօսակցութիւնը, որուն հիման վրայ արգիւտեցաւ աշխարհական մատիտներու իրաք ներածումը, որովհետեւ... անոնց պատեանին մէջ գտնուող կապարը կրնար նաեւ զինուորական գործածութեան ծառայել, ինչպէս որ արգիւտեցաւ ներածումը կարգ մը գործիքներու, որոնք պիտի գործածուէին Մոցի պատերազմին ընթացքին ռաբակուած ջուրի գործարանները նորոգելու համար, խարժեք էր:

Սոսկալի այս եզրակացութիւնն է, որ կրնանք քաղել այդ 16 էջերէն, որոնք ենթադրաբար մանրամասնութիւններ կու տան քիմիական, կենսաբանական եւ կորիզային այն ահապահներուն մասին, որոնք Պաղատի մենատէրին կողմէ պատրաստուած են մեզի համար: Տեղեկագիրը ամբողջութեամբ կարգալէ ետք դժուար է որոշել, թէ պէտք է խնդրալ կամ լալ:

Մակայն կան կարգ մը մանրամասնութիւններ, որոնք ճիշդ կը թուին ըլլալ: Ամոնիում փրքոլէյթի նոր գործարանը, որուն հում նիւթը ապօրինի ձեւով հայթայթեց հնդկական ընկերութիւն մը, ինչ որ անշուշտ խախտում մըն էր ՄԱԿի պատժամիջոցներուն, վախազու փոքր մանրամասնութիւն մըն է: Կայ նաեւ «Ալ Ռաֆաի» գործարանին մէջ հաստատուած հրթիռի փորձարկման նոր խարխալը: Մակայն այս նիւթերը այնքան մխրճուած են խաթմութիւններու եւ նենգութեան մէջ, որ անոնց ներառումը թղթածրարին մէջ անիմաստ է:

Ահաւաստիկ օրինակ մը՝ «Թղթածրարին» անպարկեշտութենէն: 45րդ էջին մէջ (Սատտամի կողմէ մարդկային իրաւանց բռնարարութիւններուն վերաբերող երկար դրուիտի մէջ) մեզի կ'ըսուի, թէ՛ «Մարտ 1991ին, Մոցի պատերազմի նախօրեակին, հարաւային Իրաքի Պասր քաղաքին մէջ ծայր տուին խուճկութիւններ, որոնք շատ արագօրէն տարածուեցան շիի ընկալութեամբ լեցուն հարաւային Իրաքի միւս թաղաքները: Իրաքի վարչակարգը այդ գէպերուն հակադարձեց հազարաւորներու սպանութեամբ»: Այս պարբերութեան մէջ սխալը «խուճկութիւններ» բառին գործածութիւնն է: Ատոնք խուճկութիւններ չէին, այլ արդիւնք էին յատկապէս նախագահ Պուշորիին հօր եւ Մէնուական Արարիայէն սփռուող «Մի. Այ. Էյ.»ին պատկանող ձայնասփիւռի կայանին կողմէ հանդուածային ընդոստութեան կոչերուն: Իրաքի շիի իսլամները հնարազանգ Պուշորի հօր կոչերուն: Հետագային, սակայն, անոնք իրենց բախտին ձգուեցան ամերիկացիներուն եւ բրիտանացիներուն կողմէ, որոնք խոստացած էին օգնութեան հասնիլ անոնց: Զարմանալի չէ ուրեմն, որ անոնք հազարներով զոհուեցան: Մակայն Պլեյրի «Թղթածրարը» չըսեր այս բոլորը:

Ան, որ կրնայ նկատել ամբողջ գրութեան մէջ գտնուող կասկածանքի բառերը, լրջօրէն կը մտահոգուի պատերազմի սկսելու Բրիտանիոյ դրդապատճառներով: Իրաքի գէնքերու շինութեան ծրագիրը «գրեթէ վստահաբար» կը միտի գարգանքի իր ելուրացիումը: Փաստ կայ, որ Իրաք փորձած է յատուկ ալիմի-ցիում խողովակներ ձեռք ձգել (եւրոպացիները կարծեցին, որ մէջ գործածուող), սակայն «յստակ տեղեկութիւններ չունինք», որ անոնք կորիզային ծրագրի մէջ պիտի օգտագործուէին: «Եթէ» Իրաք հրճած են ինք ձեռք ձգէ, ան կրնայ կորիզային գէնքեր արտադրել մէկ կամ երկու տարուան մէջ: «Դժուար է ըսել», թէ Հիւսէյնի հրթիռները գործածելի պիտի ըլլան, թէ ոչ: Իրաքեան հրթիռներու ծրագիրը վերականգնանքներու փորձերը «հաւանաբար» սկսան



1995ին: Եւ այսպէս կը շարունակուի «Թղթածրարը»: Կրնայ ըլլալ, որ Սատտամ վերսկսած է հաւաքական ոչնչացման գէնքեր շինելու իր ծրագրերին: Եկէք բոլորս 20 անգամ բարձրաձայն ըսենք, որ Սատտամ վարազ եւ շարագործ բռնատէր մըն է: Մակայն, արդեօ՞ք «գրեթէ վստահաբար»ը, «կը թուի թէ»ն, «հաւանաբար»ը եւ «եթէ»ն բաւարար են մեր զօրքերը փութ Ալ Ամարայի անպատը զրկելու:

Թղթածրարին մէջ մեծ դրուատիքի արժանացած են ՄԱԿի գէնքի քննիչները, եւ սակայն աւելի խաբէութիւններ կան այդ դրուիտին մէջ: Կը նշուի, որ ՄԱԿի քննիչներու յանձնարարութիւնը նախագահ Պուշորիին հաստատուած չըլլալուն պատճառով անկարելի է հաստատել, որ Իրաք ենթարկուած է գինաթափման հրահանգին: Մակայն, 18 Օգոստոսին, այս տարի, նոյն դոկտ. Հանս Պլիքսը «Ատլիքթրոլ Փրէս» լրատուական գործակալութեան յայտնեց, թէ ինք չի կրնար հաստատ կերպով ըսել, որ Պաղատի հաւաքական ոչնչացման գէնքեր ունի: Անշուշտ այս վերջին հաստատումը զեղչուած է Պլեյրի «Թղթածրարէն»:

Ուրեմն, ահա, եթէ այդ խարժութեան էջերը հիմնուած են «հաւանաբար»ներու եւ «եթէ»ներու վրայ, ապա մենք չենք ուզեր պատերազմի երթալ: Իսկ եթէ ըսուածները ճիշդ են, ապա մենք անտեղի ձեւով սպաննած ենք կէս միլիոն իրաքցի երեխաներ: Ի՞նչ է ձեռ կարծիքը պատերազմի այդ ոճիրին մասին:

ՌԱՊԸՐԹ ՖԻՍՔ

«Տի Ինտիփեքթը»

ՆՈՐ ԳԺՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ԶԱԶՈՐԻՆ ԱՄԵՆԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ ՄԷՁ

Ազրպէյճանի վերջին զարգացումները, ներառեալ՝ 14 Սեպտեմբերի բողոքի ցոյցը, որուն մասնակցեցան 75-ի 10 հազար ցուցարարներ, վերանորոգեցին 79ամեայ հիւանդ նախագահ Հայտար Ալիեւի յաջորդութեան մտահոգութիւնները եւ անկայունութեան նոր վարիտը յառաջացուցին: Ալիեւ կը շարունակէ պնդել, որ ինք երբորդ անգամ ըլլալով պիտի ներկայացնէ իր թեկնածութիւնը 2003ի նախագահական ընտրութիւններուն, յստակօրէն յուսալով ժամանակ շահիլ, յաւելեալ նեցուկ ապահովելու իր տղուն՝ Իլհամ Ալիեւին համար: Արդարեւ, Ալիեւ կ'ըզէ, որ իր գաւազը իրեն յաջորդէ 2008ի ընտրութիւններուն: Մակայն երկրին մէջ հետզհետէ սրող ընկերային եւ քաղաքական մարտահրաշխանքները կ'ակնահարկեն, արաբական կարգ մը վարչակարգերու նման, նախագահական գերդաստան հաստատելու Ալիեւի մտադրութիւնները:

Ալիեւի վարչակարգին դէմ առաջին մարտահրաշխանքը ուղղուեցաւ Յունիսին, երբ Նարտարան գիւղին բնակիչներուն կազմակերպած բողոքի ցոյցին ընթացքին ոստիկանութիւնը բախումներ ունեցաւ ցուցարարներուն հետ: Գիւղացիները կը բողոքէին գործի կարելիութիւններու չգոյնութեան եւ կենսի անհրաժեշտ պայմաններու անբարեարութեան դէմ: Բախումներուն սպաննուեցաւ նուազագոյնը մէկ հոգի, եւ տասնեակ մը ուրիշներ վիրաւորուեցան: Այս մէկը անկախութենէն ի վեր առաջին դէպքն էր, երբ ոստիկանութիւնը կը սպաննէր ցոյցի մասնակցող քաղաքացի մը:

Նարտարանի ցոյցին գլխաւոր պատճառը ընկերատնտեսական լուրջ տագնապներ լուծելու կառավարութեան անկարողութեան դէմ բարձրացած համատարած գայրոյթն էր: Հակառակ անոր որ Նարտարանէն շատ չեն տարբերի այլ գիւղեր եւ նոյնիսկ կան աւելի չքաւոր գաղթականներ, իշխանութիւններուն հակադարձութիւնը կայծ տուաւ լուրջ տագնապի մը: Անիկա գրգռեց երկրին ընդդիմութիւնը եւ Ալիեւի ղեկավարութեան դէմ հակաքաղաքականութեան կարեւոր մեկնակէտ հանդիսացաւ: Կացուցիչօրէն աւելի սրեցաւ, երբ կառավարութիւնը Նարտարանի տագնապին հակադարձեց գիւղին ղեկավարներուն եւ Ազրպէյճանի իսլամական կուսակցութեան կարգ մը ղեկավարներուն ձեռքադրութեամբ: Բան մը, որ հետագային արդարացուց ըսելով, թէ նպատակը «իսլամ ծայրայեղականներու կողմէ կազմակերպուած դաւադրութիւն» մը արգիւտելն էր:

Օգոստոսին կառավարութեան կողմէ այդ խիստ վերաբերումը պատճառ դարձաւ յաւելեալ ցոյցերու: Նարտարանի տագնապը նաեւ իրարու մօտեցրեց ընդդիմութեան տարբեր բեւեռները եւ առիթ տուաւ անոնց, որ առաջին անգամ ըլլալով միացեալ ջանքեր

րով հանրային եւ զգացական հակաքաղաքականութիւն կատարեն Ալիեւի ղեկավարութեան դէմ, շահագործելով գոյուցիւն ունեցող ընկերային դժգոհութիւնները:


Ընկերային խառնակութեան զուգահեռ, ընդդիմութեան անժամանակ մարտահրաշխանք արգելք հանդիսացաւ Ալիեւի նախագահութիւնը իր զաւակին փոխանցելու ծրագրին: Սահմանադրութեան բարեփոխման համար կառավարութեան ծրագրած ազգային հանրաքուէն, որուն նպատակը օրինականացնելն էր յաջորդութեան ծրագրի կարգ մը պայմանները, իտէլի առիթ մը ընծայեց ընդդիմութեան՝ Ալիեւի վարչակարգին մարտահրաշխանքը կարողուին, օգտագործելով Նարտարանի տագնապին ձգած ժխտական արձագանքները:

Ալիեւի կառավարութիւնը կ'ըզէր, որ հանրաքուէն տեղի ունենար 24 Օգոստոսին առաջարկուած 39 բարեփոխումներուն համար: ԵԱՀԿ եւ Եւրոխորհուրդը քննադատեցին հարցաթերթիկը՝ ըսելով, որ անիկա շատ բարդ է պարզ քուէարկողի մը կողմէ հասկնալի ըլլալու համար: Կառավարութիւնը նաեւ անտեսեց բարեփոխութեան առաջարկներուն շուրջ աւելի լայն րանակէճի առիթ տալու համար հանրաքուէն յետաձգելու Միացեալ Նահանգներուն առաջարկը:

Սահմանադրութեան մէջ առաջարկուած ամէնէն խնդրարարաց բարեփոխումը կը վերաբերի նախագահին անկարողութեան պարագային անոր պարտականութիւնները խորհրդարանի նախագահին փոխարին վարչապետին կողմէ ստանձնման: Այս առաջարկը մեծ աղմուկ բարձրացուց, նկատի առած, որ վարչապետը կը նշանակուի նախագահին կողմէ, մինչ խորհրդարանի նախագահը կ'ընտրուի ժողովուրդին կողմէ: Այդ բարեփոխութեան առաջարկը անսահմանափակ ուժ կու տայ նախագահին՝ իր յաջորդին ընտրութեան մէջ:

Խնդրարարաց այլ առաջարկ մըն է համամասնական ընտրութեան ձեւին ջնջումը: Ծանօթ է, որ Ազրպէյճանի 125 անդամներէ բաղկացած խորհրդարանին 20 տոկոսը կ'ընտրուի այդ ձեւով: Պաշտօնական աղբիւրներու համաձայն, 4,4 միլիոն քուէարկողներուն 88 տոկոսը մասնակցած է քուէարկութեան, եւ անոնց 96%ն 97 տոկոսը հաստատուած է առաջարկուած բարեփոխումները: Ընդդիմութեան դէտերը բողոքեցին ընտրութեան ընթացքին տեղի ունեցած զեղծարարութիւններուն եւ քուէարկողներ վախցնելու փորձերուն դէմ, մինչ միջազգային դէտերը հարցականի տակ առին հանրաքուէի արդիւնքներուն վաւերականութիւնը:

24 Օգոստոսի հանրաքուէին կառավարութեան



Կողմէ կատարուած զեղծարարութիւնները սաստկացուցին կառավարութեան հանդէպ ժողովուրդին մօտ արդէն իսկ գոյուցիւն ունեցող անվստահութիւնն ու գայրոյթը: Առաւել, ԵԱՀԿի եւ Եւրոխորհուրդին քննադատութիւնները անուղղակի նեցուկ հանդիսացան ընդդիմութեան տեսակէտներուն եւ այսպիսով անոնց վարկը բարձրացաւ ազրպէյճանցիներու աչքին:

Մակայն, ազգային հանրաքուէին արդիւնքները չվստասեցին միայն Ալիեւի վարչակարգին միջազգային վարկին կամ ներքին ժողովուրդականութեան, այլ անոնք աւելի մեծ վտանգ յառաջացուցին: Ներկայ կացութիւնը խոցելի վիճակ մը ի յայտ բերաւ, ինչ որ կրնայ վտանգաւոր անկայունութեան ծնունդ տալ, հակառակ այն իրողութեան, որ խոցելի այդ վիճակը քողարկուած էր նախագահ Ալիեւի ամբողջատիրական իշխանութեան կողմէ եւ երկրորդական կարեւորութեան առարկայ դարձած էր, առաջնահերթութիւնը տրուած ըլլալով կասպեան քարիզի վերաբերող հարցերուն: Անցնող ամրան իրադարձութիւնները ցոյց տուին, որ յետ ալիեւեան ժամանակաշրջանը պիտի ըլլայ լուրջ ճակատումներու ժամանակաշրջան մը, մինչ հաստատութիւններու եւ աւանդութեան բացակայութիւնը (յետ խորհրդարանի Ազրպէյճանի բոլոր ղեկավարները իշխանութեան զուրկ եկած են կամ քաղաքացիական պատերազմով կամ ալ ներքին խառնակութիւններէ ետք) միայն պիտի սաստկացնէ յաջորդութեան գործընթացին վտանգները:

ՌԻՉԸՐՏ ԿԻՐԱՎՈՍԵԼՆ

«Ազատութիւն» ձայնասփիւռի կայան

«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՆՈՒԱԶԱՅԻ ԹԻԻԵՐԸ
 «ԱԶԳԱԿ»Ի ճԵՆ ԿԱԿՈՒԵՂՈՒ ՏԱՄԱՐ ԳԵՆԱԿԱՆԻ
 ԳԵՆԵՒԵՆԱՅԻ ԹԻԵՐՈՒՆ - 258520, 260115 ԵՒ 241274:

www.mesrobian.com

Արձանագրութիւններ
 և քուրսուսակցութիւններ

260504

JEWELRY Design
 DIAMOND Setting
 WAX Molding
 GEMOLOGY

HAIR STYLING
 MAKE UP

Կարմիր արեւմտաւոր
 միջոց և քուրսուսակցութիւններ
 վկայեալ պարմեզ
 ևս անիլ

Tele-Video &
 Radio Repair
 Car Electricity
 & Electronics

COMPUTER
 Software & Hardware
 +
 INTERNET
 խիստ մասշտաբային կրթական

English
 For International
 Business -
 TOEFL - Cambridge
 University Certificate
 + 8 օտար լեզուներ

MESROBIAN
 TECHNICAL COLLEGE
 3 արտոնութեան
 20 ամեայ
 փորձառութիւն

TICKETING
 IATA
 Գործի Բաց
 Անցագիր
 Ուզած երկրորդ մէջ

LCCIEB
 Business
 Մասնագիտութիւններ
 վկայականներ և Լոնտոն

B.T.
 Համալսարան
 ԵՒ
 Գործ
 Երկու ընտրութիւն
 մէկ վկայականով

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

Բիւթանիոյ Հայկական գաղթօճախները, գաղթականական իրերայալորդ ալիքներէ ետք, բաւական ստուարացան ժՁ. դարուն, իսկ ժԻ. դարուն սկիզբը, շահ Արասի բռնագաղթէն, ճալալիներու արշաւանքներէն, սոզերէ ու կրօնական հալածանքներէ ետք մեծ թիւով հայեր գացին ու հաստատուեցան Բիւթանիա՝ անհամեմատօրէն աւելցնելով շրջանին հայ բնակչութիւնը. հայաբնակ գիւղերը շէնցան եւ նոր գիւղեր կազմաւորուեցան:

ՇԱՀ ԱՐԱՍԻ ԲՈՆԱԳԱՂԹԷՆ ԵՒ ՃԱԼԱԼԻՆԵՐՈՒ ՎՊՍԱՍՄԱՐՈՒԹԵՆԸ ԵՏՔ

Սուլթան Մեհմէտ Գ-ի մահէն ետք, 1603ին, անոր յաջորդեց Ահմէտ Ա., որ գահ բարձրացաւ խառնակ վիճակի մէջ, երբ ապստամբութիւններ տարածուած էին կայսրութեան տարրեր շրջաններուն մէջ: Սուլթանը քանի մը վեզիրներ գլխատել տալէ ետք ամրապնդեց իր հեղինակութիւնը:

Նոյն ժամանակ սկսաւ շահ Արասի արշաւանքը Օսմանեան կայսրութեան դէմ. շահը աւերեց Արարատեան գաղտը, Վասպուրականը, Բասենը, հասաւ մինչեւ Կարին, բայց յետոյ, Սինան փաշայի հրամանատարութեան տակ գործող օսմանեան բանակի ճնշումին տակ 1604ին նահանջեց՝ իրեն հետ Պարսկաստան բռնագաղթի մղելով հայութիւնը:

Պատերազմի, աւերածութեան ու զանգուածային բռնադատութեան պատճառով ամառացաւ հայոց երկիրը. ողջ մնացածներ կամ բռնագաղթէն խուսափած շրջաններու բնակիչներ, այնուհետեւ, դժուարութեան մատնուած, սկսան գաղթել տարրեր վայրեր, եւ անոնց մէկ մասը ճամբայ ելաւ դէպի Փոքր Ասիոյ արեւմտեան նահանգներ եւ Բիւթանիա:

Միաժամանակ սաստկացան ճալալիներու յարձակումները հայկական բնակավայրերուն վրայ: Ճալալիներու ապստամբութեան պարագլուխները մեծ մասամբ պարսկական պատերազմներուն մէջ անյաջողութիւն կրած թուրք ու քիւրտ զօրակազմներ, կառավարիչներ ու զօրքեր էին, որոնք գէնք բարձրացնելով սուլթանին կեդրոնական տկար իշխանութեան դէմ՝ սկսան ինքնագլուխ իշխել եւ միաժամանակ իրենք իրենց միջեւ պատերազմիլ:

Ճալալիներու ապստամբութիւնը, որ ծայր առած էր տակաւին 1598ին, հասաւ մինչեւ Թոքթաթ, Տրապիզոն, Պաղտատ եւ Դամասկոս՝ մահ ու աւեր սփռելով ամէն կողմ:

Ահեղ ասպատակութիւններու միջոցին

ԲԻՒԹԱՆԻԱ՝ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԿԵԴՐՈՆ

ԻԶՄԻԹԻ ՀԱՍՆՅՆՔԻՆ ՍՏՈՒՐԱՅՈՒՄԸ

Բիւթանիա հասնող գաղթականներէն անոնք, որոնք ընդհանրապէս պարսկահայեր էին, բնակութիւն հաստատեցին շրջանի կեդրոն իզմիթ քաղաքին մէջ: Գաղթականներուն մէջ կը գտնուէր ազուլիսցի նաւասարդեան ընտանիքը, որուն սերունդները մինչեւ Մեծ Եղեռնի տարիները ազդեցիկ էին իզմիթի մէջ: Հայկական գաղութը մը արդէն կար իզմիթի մէջ, որ այսպէսով մեծապէս ստուարացաւ:

Իզմիթ հայերուն շնորհիւ բարեկարգ ու շէն քաղաքի վերածուեցաւ: Թուրքեր, նախանձելով հայերուն, քչեցին զանոնք իրենց թաղէն եւ քաղաքին արեւմտեան կողմը գտնուող Գատի Պայրի ամայի շրջանին մէջ բնակեցուցին, իսկ իրենք գրաւեցին հայերուն թաղը: Սակայն շատ չանցած՝ հայերը իրենց տրուած շրջանը շէնցուցին եւ բարեկարգ վիճակի հասցուցին, իսկ թուրքերուն գրաւած թաղը անշքացաւ:

ՄԻՋԱԳԻՒՂԻ ԵՒ ՆՈՐ ՄԵՃ ԳԻՒՂԻ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ

Բիւթանիոյ շրջանը ապաստան գտած ակնցի գաղթական քանի մը տասնեակ ընտանիքներ Նիկիոյ լիճին մօտակայքը, լեռան մը ստորոտը հասան, ուրկէ ձորի մը մէջէն գետակ մը կը հոսէր: Անոնք հոն, ձորի երկու կողմերուն թաղեր կազմեցին: Անոնց մօտակայքը թրքաբնակ կուկուկ գիւղը հար: Գաղթականները, երբ տեսան, որ իրենց հաստատուած շրջանին հողը անկալուն է եւ յաճախակիօրէն կը շարժի փոփոխուի եւ հեղեղներու պատճառով, հարկադրաբար ձգեցին իրենց նորակերտ բնակավայրը. հիւսիսի թաղին բնակիչները կուկուկի թուրքերուն հաւանութեամբ հոն հաստատուեցան. հետագային թուրքերը հետացան հոնկէ եւ կուկուկ գոտւ հայաբնակ դարձաւ. գիւղը այնուհետեւ կոչուեցաւ Միջագիւղ կամ Օրթթաքէօյ:

Իսկ հարաւային թաղի բնակիչները գացին ու հաստատուեցան մօտակայ ձիթենիի յնդարձակ պարտէզներով ու տրտերով շրջապատուած թրքաբնակ ձետիտ Գարիէ գիւղին մօտակայ կալտաղը: Հողագործի ըլլալով՝ անոնք թուրք գիւղացիներուն մօտ աշխատանքի մտան իբրեւ մշակներ: Ժամանակ մը ետք, թուրքերը իրենց մշակները հեռուէն չկանչելու համար հրամայեցին անոնց գիւղամէջ գալ բնակիլ: Հայերը, որոնք մինչ այդ կայրուան մէջ, վրաններու տակ կը բնակէին, ընդունեցին առաջարկը: Այնուհետեւ ձետիտ Գարիէ գացին ու հաստատուեցան այլ վայրերէ հայեր. անոնց մէջ կային կեսարացիներ, որոնք յետոյ Գայսերեան ազգանունը առին: Այսպէսով գիւղը մեծամասնութեամբ հայաբնակ դարձաւ, եւ հետագային անոր ձետիտ Գարիէ անունը հայերէնի թարգմանութիւնով՝ կոչուեցաւ Նոր Գիւղ եւ այնուհետեւ ալ՝ Նոր Մեծ Գիւղ, զանազանելու համար գայն Նիկիոյ Նոր Գիւղէն:

ՕՎԱՃՐԳԻ ԵՒ ԱՐՍԼԱՆՊԵԿԻ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԸ

